ԼԵՌՆԱԿԵՐՏ

Համայնքը հիմնադրվել է 1830-1840-ական թթ., մի մասն էլ 1915-1918թթ.՝ Մուշից և Ալաշկերտից եկած գաղթականների կողմից: Գտնվում է Արթիկ քաղաքից 10 կմ հարավ՝ բարձրադիր գոտում: Գյուղում պահպանվել են մ.թ.ա. III-I հազարամյակների ամրոցների, բնակատեղիների մնացորդներն ու դամբարանադաշտերը: Հատկանշելի է գյուղամիջյան Ս. Հովհաննու Կարապետ միանավ բազիլիկ եկեղեցին՝ վերակառուցված 2004թ.: Եկեղեցու շուրջ դրված են միջնադարյան բեկորային ու ամբողջական խաչքարեր, քանդակազարդ քարեր: Նորաշեն մուտուռի մեջ են գտնվում «Զույգ խաչ» անունով հայտնի IX-X դդ. խաչքարերը:

Գյուղի եկեղեցին վիմագրերով աչքի չի ընկնում: Թ. Թորամանյանը նշում է, որ «արձանագրության անընթեռնելի հետքեր կան թափված հարավային պատի վրայի պատուհանին մեջ դրված քարերեն մեկուն վրա, որոնց ձևը 10-րդ դարու տառերու ձևը ունին»[22]: Մեր այցի ժամանակ մենք այն չտեսանք, քանի որ վերակառուցման ժամանակ քարը, հավանաբար, կորստյան է մատնվել: Փոխարենը եկեղեցու հյուսիսային պատի արևմտյան մասում նկատեցին մի առանձին քարի վրա պահպանված քառատող արձանագրության հատված:

31*. Ս. ՀՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսային պատին, արտաքուստ, 4 տող.



ԵՍ ՎԵ / ՍՍ Ս / ԴՐՔԵ / ՔԱՐ:

22 ***Թ. Թորամանյան,*** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Բ, Երևան, 2013, էջ 209: